



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՉԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *«Արժեքային համակարգի ձևավորումը Հանրակրթական դպրոցում»*

ԱՌԱՐԿԱ՝ Հասարակագիտություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Մարինե Կաֆաֆյան

ՄԱՐԶ՝ Արագածոտնի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝

Եղիապատրուշի միջն. դպրոց

Բովանդակություն

1. Ներածություն:.....	3
2. Հայրենասիրությունը, որպես գերագույն արժեք:.....	4
3. Ընտանիքը որպես արժեք:.....	6
4. Ազնվությունը մարդկային հարաբերություններում:.....	8
5. Մարդասիրությունը որպես համընդհանուր և համագգային արժեք:.....	10
6. Արվեստների գրականության դերը մարդկության զարգացման մեջ:.....	12
7. Գեղեցիկի ընկալումն ու նրանով ապրելը, որպես արժեք:.....	13
8. Ազգայինի պահպանումը գլոբալիզացիայի պայմաններում:.....	14
9. Եզրահանգում:.....	15
10. Առաջարկություններ:.....	16
11. Ծանոթություն:.....	16
12. Հետգրություն:.....	16

Ներածություն

Նպատակը. Արժեքային համակարգի ձևավորման նպատակը մեր պետության, մեր ժողովրդի համար, հայրենասեր, մարդասեր, խոր գիտելիքներով զինված, մեր երկրի բարգավաճման համար պատրաստ, ազգային ու բարոյական բարձր հատկանիշներով օժտված քաղաքացի ունենալն է:

Արդիականություն. Այս թեմայի գերխնդիրը խիստ էական է սովորողների ճիշտ դաստիարակման գործում: Ժամանակակից հարափոփոխ աշխարհում, մեր պետության մեջ այս գերխնդիրը հրատապ է ու արդիական՝ ինչպես երբեք:

Հայտնագործություն արած չենք լինի, եթե նշենք, որ հանրակրթական դպրոցի սովորողը նախ պետք է լինի երկրի ոչ միայն լիիրավ, այլև՝ լիարյուն քաղաքացին: Իմա՝ նա պետք է հոգու մեջ կրի այն բոլոր արժեքները որոնց մասին խոսք է գնում այս աշխատանքի մեջ, քանզի միայն և միայն այս արժեհամակարգը կրող քաղաքացին կարող է դառնալ իր երկրի, իր ժողովրդի և՛ ծառան, և՛ տերը:

Մեր գերխնդիրը պետք է լինի այս արժեհամակարգով զինել սերունդների, որպեսզի՝

- Պահպանենք մերը՝ ազգայինը,
- Միշտ մնանք բարոյական բարձր հատկանիշներով օժտված,
- Մեր գիտելիքները ի սպաս դնենք մեր հայրենիքի, մեր ժողովրդի բարօրության համար,
- Իմանանք՝ ու՞մ և ի՞նչն ենք պաշտպանում,
- Գիտակցենք մեր տեղն ու դերը, չկորցնենք մեր ազգային դիմագիծը գլոբալիզացիայի պայմաններում:

Մեր նպատակին հասնելու համար ատորև շարադրված են համապատասխան մեթոդներ, որոնց արդյունավետության վերլուծությունից ելնելով՝ կարելի է դրանք անընդհատ կատարելագործել:

Առողջ հասարակություն ձևավորելու համար մեզանում խիստ անհրաժեշտ է մատաղ սերնդի մեջ սերմանել և ձևավորել արժեհամակարգ, որի պայմաններում ամբողջական և ճիշտ կլինի յուրաքանչյուր անհատի, հետևաբար ողջ հասարակության ներդաշնակ ու արգասաբեր գործունեությունը:

Արժեհամակարգի ձևավորման սաղմերը և վերջինիս դեռևս պարզունակ, բայց հիմնավոր պտուղները պետք է երևան գան ընտանիքում և մանկապարտեզում:

Ի վերջո ուսուցումը հանրակրթական դպրոցում պետք է ունենա երկու բաղադրիչ՝

ա) Ուսումնառություն

բ) Հասուն քաղաքացու ձևավորում:

Բազմաբնույթ գիտելիքներով զինված սովորողը չի կարող դառնալ հասուն ու իր երկրի համար լիարժեք քաղաքացի, եթե աղքատ է նրա արժեքային համակարգը:

Մանկավարժների խնդիրն է հանրակրթական դպրոցում սովորողներին զինել գիտելիքով և սերմանել այն գիտակցումը, որ իր ստացած գիտելիքները անհրաժեշտ են ի՛ր երկրին, ի՛ր ժողովրդին:

Իմա՝ մանկավարժը հանրակրթական դպրոցում ոչ միայն գիտելիքներ է տալիս, այլև՝ որ ըստ իս ավելի է կարևոր է՝ ձևավորում, կերտում է քաղաքացի:

1. Հայրենասիրությունը որպես գերագույն արժեք

Հայրենասիրությունը անձի աշխարհայացքի ձևավորման մեջ էական նշանակություն ունի: Այն ձևավորվում է երեխայի դեռևս ընտանիքում ու բակում, հետո հարստանում և ամբողջանում է ուսումնառության տարիներին և նրա կենսագործունեության ողջ ընթացքում:

Այս արժեքը փարոսի նման լույս է տալիս անհատի ողջ գիտակցական կյանքում:

Հայրենասիրության արժեքի ձևավորման համար կարևոր նախահիմք է անհատի գենետիկական առանձնահատկությունները, որոնք բարենպաստ միջավայրի և ճիշտ ուսումնադաստիարակչական գործընթացի պայմաններում ավելի են հասունանում, դառնում անհատի գործունեության շարժիչ ուժն ու գերնպատակը:

Հանրակրթական դպրոցում դասավանդող հատկապես հումանիտար առարկաները մեծ խթան կարող են հանդիսանալ այս արժեքի ձևավորման համար:

Հայոց պատմության, հայոց լեզվի և գրականության դասերի ընթացքում կարելի ստեղծել միջառարկայական կապեր՝ կարճ գրույցների, պատմական իրադարձությունների, հայ ժողովրդի հերոսական պայքարի մասին՝ դրանց խտացումը ցույց տալով սովորողներին հայրենասիրական թեմայով գրված հայ դասականների բազմաթիվ ստեղծագործություններում:

Որպես հայրենասիրության վառ օրինակ սովորողների համար պետք է ծառայեն ոչ միայն Խ. Դաշտենցի Մուշեղ Գալշոյանի հերոսները, Զրանտ Մաթևոսյանի արարող ու պայքարող, երկրին ու հողին տեր կանգնող ազնիվ մարդիկ, այլև արցախյան հերոսամարտի շատ ու շատ հերոսներ, որոնց արյան գնով մեր արժանապատվությունը ու պատիվը պահեցինք:

Սովորողի համար հանապազորյա աղոթք պետք է դառնան «Ես իմ անուշ Հայաստանի», Վահան Տերյանի «Երկիր Նաիրիի», Թումանյանի «Հայրենիքիս հետ» շարքերի գործերը:

Սովորողի մեջ պետք է ամրապնդել այն ճշմարտությունը, որ սիրելի հայրենիքը՝ նշանակում է աշխատել, տքնել նրա բարորության համար, պահպանել ու պաշտպանել նրան, որ չի կարող որևէ մեկը լինել հայրենասեր, եթե չի սիրում, ուշադիր չէ, հոգատար չէ իր փողոցի, իր գյուղի, իր քաղաքի, հետևաբար իր երկրի համար:

Որեմն սովորողի մեջ պետք է ամրապնդել այն միտքը, որ սրիելով չէ միայն, որ կարող է ծաղիկը չթառամի, ծառը չչորանա, հողը բերրի մնա, ծնողներն ու մերձավորները երջանիկ լինեն:

Ավագ դասարաններում պետք է ամրապնդել այն միտքը, որ բոլոր ժամանակներում էլ հայրենասեր ժողովուրդներն են միայն զարգացման բարձր մակարդակ ապահովել:

Հայրենիքի նկատմամբ անմնացորդ սերն է մեզ դարերի փորձությունների միջով բերել հասցրել բազում հարցականներով լի մի ներկա և հայ ժողովուրդը միայն ու միայն իր հայրենասիրությամբ կարող է հաղթահարել բոլոր այն խնդիրները, որոնք ծառացած են մեր առաջ:

Հայաստանի աշխարհագրության ժամերին սովորողների մեջ պետք է ամրապնդել և պատմական Հայաստանի սահմանները, դրվագներ պատմել հայ ազատամարտի պատմությունից , և՛ Հայաստանի ներկայիս սահմանները:

Այս տեսանկյունից առավել համապարփակ կարելի է անցկացնել և Հայոց պատմության և՛ Հայ Գրականության դասաժամերը:

V դարի մատենագրությունը ուսումնասիրելիս քարտեզի վրա նշել այն պատմական վայրերը, որտեղ հայ ժողովրդի համար բախտորոշ իրադարձություններ են կատարվել:

Փալստոս Բզյուզանդի պատմությունը ուսումնասիրելիս սովորողներին պետք է մատուցվի այն փաստը, որ դրա հիման վրա հայ մեծ պատմավիպասան Րաֆֆու կողմից գրված «Սամվել» պատմավեպը հիմք հանդիսացավ հայ ազգային ազատագրական շարժմանը:

Սամվելի հերոսական կերպարը ոգեշնչել է սերունդներին, դաստիարակել առաջին ազատամարտիկներին ոգեշնչել հայրենասիրական վեհ գաղափարներով:

Սովորողների մոտ պետք է ամրապնդել այն փաստը, որ հայ ազգային-ազատագրական շարժումը 19-րդ դարում մեծապես պայմանավորված էր Միքայել Նալբանդյանի, Ռաֆայել Պատկանյանի ազատասիրական և հայրենասիրական բանաստեղծություններով և Րաֆֆու «Դավիթ Բեկ»-ով:

Այս ամենը պետք է կատարվի նաև ֆիլմերի դիտումով, նախագծային, ինչպես նաև հետազոտական աշխատանքներով և կարճաժամկետ և՛ երկարաժամկետ

Սովորողներից յուրաքանչյուրը պարտավոր է իմանա հայ ազգի պատմությունը արժանապատվորեն գլուխ խոնարհի անցյալի պատմական իրողությունների, հայրենասեր գաղափարների, ազգային արժեքների, ազգային հերոսների առջև:

Սովորողը պետք է հասկանա այն արժեքները, որոնք ձեռք են բերվել արյան և կյանքի գնով, որի արդյունքում մենք ենք՝ հայ ազգը:

Հայրենիքը սրբություն է, և մեզանից յուրաքանչյուրը պարտավոր է սիրել ու պահպանել իր հայրենիքը, լինել հայրենասեր, որի հիմքը քաջ լինելն է: Հայրենասիրության գաղափարները ծնվում են ծնված օրվանից ծննդավայրում:

Այս ամենը կարելի է իրականացնել կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցումով: Կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթությունը գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների և արժեքների համակարգ է, որը հնարավորություն է տալիս սովորողին օգտագործել գիտելիքի վրա հենվող կարողություններ և հմտություններ՝ պատշաճ և արդյունավետ կերպով արձագանքելու տարատեսակ իրավիճակներ:

2. Ընտանիքը որպես արժեք

Սովորողներին հասուն պետք է դարձնել այն ճշմարտությունը, որ դարեր շարունակ հայ ժողովուրդը զրկված լինելով պետականությունից, մատաղ սերնդի դաստիարակությունը իրականացրել է ընտանիքներում: Իհարկե մեր վանքային համալիրները կատարել են դպրոցի դեր, սակայն ընտանեկան դաստիարակությունը եղել է այն նախահիմքը, որի վրա դարեր շարունակ իրականացվել է երեխաների կրթությունը վանքերում ու եկեղեցիներում, հետագայում նաև 19-րդ դարից սկսած ծխական և այլևայլ դպրոցներում:

Ընտանիքն է այն միջավայրը, որտեղ ժառանգականորեն և սոցիալապես ձևավորվում է երեխայի մոտ այն նախադրյալները, որոնք ուղղորդիչ դեր են կատարելու նրա ողջ կյանքում:

Սովորողների գիտակցության մեջ պետք է ամրապնդել այն փաստը, որ ընտանիքը մարդու համար սրբություն է: Այնտեղ է որ առավել խստորոշ է մեծի ու փոքրի հարաբերակցությունը, ազնիվ աշխատանքի և վաստակի դերը:

Սովորողներին դասերի ընթացքում գրույցների ձևով պետք է յուրաքանչյուրի ընտանիքի ձեռքբերումներն ու նվաճումները դրվատել, ցույց տալ յուրաքանչյուր ընտանիքի մեծի ու փոքրի բարի գործերը: Պետք է հասնել այն բանի, որ յուրաքանչյուր սովորող ոգեշնչվի ու թևավորվի ոչ միայն իր ընտանիքի, այլև՝ ուրիշ ընտանիքների համերաշխ, բարի ստեղծագործ աշխատանքներով ու նվաճումներով: Ավագ դասարաններում սովորողների գիտակցության մեջ պետք է ամրապնդել այն ճշմարտությունը, որ լավ ընտանիքն է լավ զավակ ունենում, լավ ընտանիքներից է, որ լավ ժողովուրդ է կազմավորվում, որ յուրաքանչյուր ժողովրդի նվաճումը իր լավ ընտանիքներն են: Ընտանեկան հարաբերությունների և ընտանիքի գերիխնդիրը, որ այդպես հանճարեղ կերպով պատկերված է Ա. Շիրվանզադեի «Քաոս»-ում այդ թեման ուսումնասիրելիս ուսուցիչը պետք է հորապես սովորողներին հասու դարձնի ընտանեկան մաքուր հարաբերությունների դերն ու նշանակությունը:

Ընտանիքը որպես արժեք սովորողների մոտ ձևավորելու գործում մեծ դեր կարող է խաղալ Մուրացանի «Գևորգ Մարգաբետունի» պատմավեպի խորագրին ուսուցումը, որտեղ գրողը հանճարեղորեն է ներկայացրել հայ ընտանիքի դերը հայոց պետականության կերտման գործում:

Ընտանեկան հարաբերությունների մեջ գերիշխող՝ միայն հայ ընտանիքի յուրահատուկ բարոյական արժեքներն են կերտում առողջ ու ազնիվ երեխա:

Եվ այս ճշմարտությունը պետք է սովորողներին հասու դարձնել կոնկրետ օրինակներով: Նրանց հասու պետք է դարձնել այն իրողությունը, թե ինչպիսի ընտանիքներում են ծնվել ու դաստիարակվել հայ ազատամարտի բազում հերոսներ: Օրինակները բազմազան են: Արցախյան ազատամարտի հերոսներին՝ Թաթուլ Կրպեյանին ու Մոնթե Մելքոնյանին, Վիտյա Այվազյանին, շատերին: Ընտանիքը հանդիսանում է դաստիարակության կարևորագույն օջախներից մեկը: Դպրոցի ուսումնա-դաստիարակչական աշխատանքի ճիշտ դրվածքի համար անպայման պետք է իմանալ, թե ինչպես է դաստիարակվում սովորողը ընտանիքում, արդյոք համաձայնեցվում է ընտանեկան դաստիարակությունը դպրոցում տարվող դաստիարակության սկզբունքների ու մեթոդների հետ, ինչպես գործնական հմտություններով է աշակերտը եկել դպրոցական կոլեկտիվ:

Վերլուծելով այս ամենը, հանգում ես այն եզրակացության, որ թերությունների մեծ մասը բացատրվում է ընտանիքը վատ ճանաչելով, ծնողների հետ տարվող աշխատանքի մտածված սխատեմի բացակայությամբ:

Երկար տարիներ մանկավարժական հետազոտությունները ցույց են տալիս, որ սովորաբար, որոշ աշակերտների կողմից հետադիմության, թույլ կարգապահության, հանրագուտ աշխատանքի նկատմամբ անփույթ վերաբերմունքի հիմնական պատճառը նրանց մոտ աշխատասիրության, աշխատանքային հմտությունների բացակայությունն է, դժվարությունները հաղթահարելու անկարողությունը:

Ընտանիքը և ընտանեկան արժեքները երկու հասկացություններ են, որոնք չեն կարող գոյություն ունենալ առանց միմյանց:

Ընտանեկան արժեքները կորցնում են իրենց նշանակությունը, եթե ընտանիք չկա: Իսկ ընտանիքը չի կարող գոյություն ունենալ առանց հիմնարար սկզբունքների, որոնք կարող են պահպանել նրա ամբողջականությունն ու հոգևոր առողջությունը:

Ամբողջական արժեհամակարգ ունենալու համար սովորողները կարող են ստեղծել «Տոհմածառ» ուսուցչի հանձնարարությամբ օգտագործելով «Շրջագայություն պատկերասրահում» մեթոդը: Արդյունքում կունենանք սովորողների ստեղծած տոհմածառի հետաքրքիր պատմությունները պաստառների վրա, որպես իրական փաստեր:

Կարելի է կազմակերպել արտադպրոցական միջոցառում, նվիրված ընտանիքի միջազգային օրվան, որը Հայաստանի Հանրապետությունը ամրագրել է ընտանիքի օր 2011 թվականից և նշվում է մայիսի 15-ին:

Այդ օրը ավագ դպրոցի երեխաները կարող են դպրոցում հյուրընկալել որևէ մշակութային գործչի ընտանիքին, կամ բազմազավակ ընտանիքներից մեկին:

3. Ազնվությունը մարդկային հարաբերություններում

Այս կարևորագույն արժեքն է պայմանավորում սովորողի գործունեության ողջ ընթացքը դպրոցում:

Այն հիմք է հանդիսանում նրա բնավորության կերտմանը: Իհարկե մարդկային այս կարևորագույն արժեքի ակունքը շատ խորն է, նրա բերած անապական ջուրը չպետք է պղտորվի, դառնա ավելի վճիտ ու պայծառ:

Սովորողի գենետիկական այս առավելությունը պետք է այնքան զտվի ու մաքրվի սոցիալ-կենցաղային այլևայլ նստվածքներից, որ լույս սփռի նրա ապագա գործունեության և իր

շրջապատի վրա: Այս արժեքը ձեռքբերովի չլինելով հանդերձ՝ կարող է զարգանալ դեռահասի դաստիարակության տարիներին: Այս կարևոր գործում մեծ նշանակություն ունի շփումը դպրոցում և շրջապատում եթե այն բարենպաստ է:

Մանկավարժի պարտքն է ստեղծել առողջ հարաբերություն սովորողների ծնողների հետ, համագործակցել նրանց հետ այս գործում, օգնել նրանց ստեղծելու այնպիսի իրավիճակներ, այնպիսի դրվակներ, որոնք կկոփեն ազնվությունը, իսկ եթե այն նվազ է և թույլ, ապա այն կգորացնեն:

Այս արժեքի ամրապնդման համար , օգնության են գալիս մեզ գրական շատ ու շատ կերպարներ՝ և ծրագրային նյութերից և գեղարվեստական գրականությունից: Այս կարևորագույն գործում դաստիարակիչ մեծ խթան է հանդիսանում նաև կինոարվեստը: Սովորողների հետ մանկավարժները պետք է հաճախակի դիտեն և քննարկեն հայ դասականների գործերի հիման վրա նկարահանված ֆիլմերը: Ասենք՝ Շիրվանզադեի «Քաոս»-ն ու «Պատվի համար»-ի, Հրանտ Մաթևոսյանի «Աշնան արև», «Տերը» վիպակների հիմքերով գրված ֆիլմերը:

Ազնվության արժեքի զարգացման ու ամրապնդման համար սովորողների մոտ մեծ դեր կարող է խաղալ նաև այցելությունները նշանավոր մարդկանց տուն-թանգարաններ արշավները, էքսկուրսիաները, որոնց ընթացքում կենսափորձով արդեն սովորողը զգում և տեսնում է որ միայն մարդկային ազնիվ հարաբերությունների պայմաններում է հնարավոր ծավալել առողջ գործունեություն, իրագործել մեծ ու փոքր նպատակներ:

Նա արդեն պետք է համոզվի, որ ազնիվ մարդը կարող է լինել հայրենասեր, միայն նա է ընկերասեր ու մարդասեր, որ մարդկային բոլոր հարաբերությունների հիմքում պետք է լինի ազնվությունը:

Ազնվության արժեքի ձևավորման և ամրապնդման համար խիստ անհրաժեշտ է սովորողների մոտ հիմնավորել գեղարվեստական գրականության հմայքը: Հատկապես կարևոր է համաշխարհային գրականության ոսկե ֆոնդից առանձնացնել, ընթերցման և քննարկման դնել այնպիսի հանրահայտ ստեղծագործություններ որոնցում առկա են դեռահասի և հասուն անձնավորության բարդ ու ոչ միշտ անհարթ հարաբերություններ, ինչպես նաև՝ դեռահասների միջև տեղի ունեցող մարդկային բարդ հարաբերություններ որոնց հեղինակները շեշտը դրել են մարդկային այս կարևորագույն արժեքի՝ ազնվության վրա: Սրա լավագույն օրինակն են Մարկ Տվենի «Թոմ Սոերի» արկածները, Հեյլբերի Ֆինսի արկածները, Անատոլ Ֆրանսի Գավրոշի կերպարը «Թշվառներում», Անտուան Դե Սենտ

Էքսյուպերիի «Փոքիկ իշխանը, հայ հեղինակներից Վախտանգ Անանյանի «Սևանի ափին», «Հովազաձորի գերիները» վեպերը:

Այս ստեղծագործությունների հերոսների արարքներն ու գործունեությունը, որոնց ընթացքում կարմիր գծի պես երևում է մարդկային ազնվության արժեքը, խիստ ուսանելի կդարձան սովորողների հոգեկերտվածքի ձևավորման վրա, որում կարևորագույն հիմնաքարը պետք է լինի մարդկային ազնվությունը:

Ազնվությունն դա շատ կարևոր արժեք է, որով մարդը կարող է ավելի լավ և լիարժեք, ապրել՝ գիտակցելով, թե ինչ է ուզում և՛ սովորողների համար, լինելով արժեք, որը պետք է սովորեցնել փոքր տարիքից:

4. Մարդասիրությունը որպես համընդհանուր փ համազգային արժեք:

Սովորողների մոտ ծրագրային- դպրոցական նյութերի ուսուցման ընթացքում (հայ եկեղեցու պատմության ժամերին) պետք է ամեն թեմայից առաջ սովորողներին հիշեցնել մարդասիրության ամենապայծառ օրինակը՝ Հիսուս Քրիստոսի խաչելիության իրողությունը: Եվ քանի Աստված մարդուն արարել է ի պատկերի յուրում, նրան ցույց է տալիս նաև իր նմանին սիրելու ամենավառ օրինակը: Չէ որ Փրկիչը տարբերություն չէր դնում ոչ ոքի միջև՝ իր վրա վերցնելով համայն մարդկության մեղքը՝ հանուն մարդու: Սա պետք է բանալի լինի սովորողների համար ընկալելու, հասկանալու և ընկալելու մարդասիրությունը:

Ավագ դպրոցի դասարանների սովորողներին պետք է հիշեցնել և ամրապնդել այն ճշմարտությունը, որ հայ ժողովուրդը դեռևս վաղնջական ժամանակներից եղել է արժանապատիվ ու հյուրասեր, ասել է՝ մարդասեր: Պետք է բերել օրինակներ հույն պատմիչ Հերոդոտոսի վկայությունները հայերի մարդասիրության ու պատվասիրության մասին:

Սովորողների մոտ պետք է ամրապնդել այն ճշմարտությունը, որ մարդկային այս արժեքը յուրահատուկ է եղել մեր ազգին և պատահական չէ որ քրիստոնեությունը որը որպես կրոն ամբողջովին մարդասիրություն է, առաջինը ընդունվեց հայ ժողովրդի կողմից: Այո, սա փաստ է, որ հայ ժողովուրդը բոլորից շատ կարիք ուներ արդարության ու մարդասիրության և որ հայ ժողովուրդն էր ամենից շատ փափագում ապրել քրիստոնեական սկզբունքներով, որի հիմքում ընկած է մարդասիրությունը:

Հազարամյակներ շարունակ հայ ժողովրդի կողմի դրսևորած բազում օրինակների հիման վրա սովորողների մոտ պետք է ձևավորել այն միտքը, որ նրանցից յուրաքանչյուրը չի կարող մարդասեր չլինել, քանի որ նրա երակներում հոսում է իր պապերի ազնիվ արյունը: Չէ որ մեր

ժողովրդի ողջ պատմությունը նույնիսկ ամենաողբերգական պահերին անգամ փայլատակել է իր մարդասիրական վեհ դրսևորումներով: Այս իրողության ամենավառ օրինակներից մեկը հետևյալն է, որ պետք է տեղեկացնել սովորողներին: Խոսքն այն մասին է, որ երկրորդ համաշխարհայինի ահեղ օրերին ֆաշիստական համակենտրոնացման ճամբարներից մեկում մի խումբ հայ ռազմագերիներ մահվան սարսափը հոգում օգնում են մի հրեա ռազմագերու, վկայում նրա Երևանցի լինելը, փրկում դաժան կործանումից՝ իրենք իրենց դատապարտելով բազում հարցաքննությունների: Այդ մեծ մարդասեր հայերն էին Ալեքսանդր Ղազարյանը, Բարդուխ Պետրոսյանը, իսկ փրկված հրեա Կոզան ազգանունով, երկար տարիներ ապրել է Դնեպրոպետրովսկ քաղաքում:

Մարդասիրության թեման որպես արժեք պետք է ամրապնդել յուրաքանչյուր սովորողի մոտ: Մարդասիրության դրսևորման վառ օրինակ կարող է հանդիսանալ Նաև Սպիտակի ահեղ երկրաշարժի օրերին հայ ժողովրդի հանդեպ համայն աշխարհի ժողովուրդների կողմից ցուցաբերած կարեկցանքն ու օգնությունը, և այդ մարդասիրական գործունեության ընթացքում ավիաաղետին զոհ գնացած սերբ օդաչուների հուշարձանի պատվանդանից պետք է անպակաս լինի թարմ ծաղիկներ:

Սովորողների մոտ մարդասիրությունը որպես արժեք պետք է ամրապնդել ընկերասիրությունից:

Ի՞նչ է արժևորում մարդասիրությունը:

Դա հումանիզմն է, լայն իմաստով դա նշանակում է արժևորել մարդուն ու մարդու վիճակը: Այս առումով, դա կապված է առատաձեռնության, կարեկցանքի և մարդկային հատկանիշների և հարաբերությունների արժեքի նկատմամբ մտահոգության հետ:

Մարդկային հարաբերություններում պետք է իշխի անկեղծությունն ու մաքրությունը, որոնց առկայության դեպքում է միայն ձևավորվում մարդասիրությունը:

Այս արժեքի ձևավորման համար դասական օրինակ է հանդիսանում Պարույր Սևակի «Մարդ էլ կա մարդ էլ» որը ծրագրային նյութ է հանրակրթական դպրոցներում: Պետք է ցույց տալ աշխարհի շալակն ելած մարդուն, սովորողների մոտ քաջություն սերմանել պատռել նմանի դիմակը, ատել ու արհամարել հաճոյամուլներին ու քծնողներին, շողոքորթներին, ստախոսներին ու պաշտոնամուլներին, նրանք երբեք չեն կարող լինել մարդասեր: Եվ սրան հակառակ՝ փառաբանել, սիրել հարգել «աշխարհի շալակած մարդուն», ցույց տալ նրա վեհությունը, օգնել ու սատար կանգնել նրան որպեսզի մարդասիրությունը զորանա և դառնա շատերի առաքելությունն այս կյանքում: Այս արժեքի ձևավորման ու ամրապնդման համար մեծ դեր կխաղա արվեստն իր բոլոր ճյուղերով: Հանրահայտ գեղանկարիչների

բազում կտավներ, որոնցում առկա են մարդասիրության, մարդկային կամքի բարության բազմաթիվ դրսևորումներ:

Մարդասիրության արժեքի ամրապնդման համար անսպառ շտեմարան է մեր ժողովրդական «Սասնա Ծռեր» էպոսը, որի հերոսները ի հակադրություն շատ ժողովուրդների էպոսների հերոսներին՝ օժտված է ոչ թե նենգությամբ ու խարդախությամբ, արնախումբությամբ ու մարդատյածությամբ այլ՝ ներողամտությամբ ու հանդուրժողականությամբ, ազնվությամբ ու Մարդասիրությամբ:

Օրինակները բազմաթիվ են և ուսանելի՝ հանրակրթական դպրոցի սովորողների համար:

Մարդասիրության արժեքի ձևավորման համար խիստ ուսանելի են նաև այցելություններ մանկատներ ու ծերանոցներ, կարելույն չափ օգնության ձեռք մեկնել կարիքավորներին:

Այս գործում խիստ ուսանելի և անհրաժեշտ է նաև կազմակերպել այցելություններ տվյալ բնակավայրի միայնակ ու օգնության կարիք ունեցող ծերերին, թեթևացնել նրանց հոգսը:

Ծիշտ է ասված, որ կենդանիներին ու թռչուններին հալածող ու ատող մարդը երբեք չի կարող մարդասեր լինել:

Սովորողների մոտ այնպես պետք է արմատավորել հումանիզմը, որ այն իրենց ողջ ապագա գործունեության ընթացքում դառնա իրենց մշտական ուղեկիցն ու ուղենիշը, քանզի միայն մարդասեր սովորողը կարող է դառնալ հասարակության լիարժեք անդամ:

5.Արվեստների փ գրականության դերը մարդկության զարգացման մեջ

Սովորողների համար արվեստն ընդհանրապես իր կարևորագույն դերակատարումն ունի նրանց հոգեկերտվածքի ձևավորման գործում: Այս իսկ պատճառով այն նրանց ապագայի լիարժեք մարդ դարձնելու գործում կարևորագույն արժեքներից մեկն է:

Երեխային դեռևս մանկապարտեզից պետք է ծանոթացնել չարի և բարու, համարձակի ու վախկոտի կերպարներին կիրառական արվեստների գործերի միջոցով:

Այս կարևորագույն նպատակին հասնելու համար եթե ընտրենք նաև այդ կերպարներին համապատասխան բնորոշ երաժշտություն, ավելի դյուրին կհասնենք մեր նպատակին:

Գեղարվեստն ընդհանրապես՝ ներառյալ գրականությունը (Այն հաճախ են տարանջատում գեղարվեստից, որն իհարկե սխալ է) կարևորագույն նշանակություն ունի հոգեկերտվածքի և

բնավորության ձևավորման գործում որպես արժեք: Եվ նրա ազդեցությունը մարդու վրա զգալի է նրա կյանքի բոլոր շրջափուլերում: Այն իհարկե դեռահասի վրա ավելի շուտ է թողնում իր բարերար ազդեցությունը:

Այս արժեքի ձևավորման և ամրապնդման համար արժե այցելել պատկերասրահներ, դիտել արվեստի գործերը և երեխաներին հանձնարարել դրանց ընկալելու շուրջը գրել փոքրիկ շարադրություններ և քննարկել: Օրինակ գրել շարադրություններ հետևյալ թեմաներով:

«Ինչ եք զգում դիտելով աստվածաշնչյան Դավթի պատկերումը», «Ինչ ապրումներ եմ ունենում Երվանդ Քոչարի «Սասունցի Դավիթ» արձանը դիտելիս»:

Արվեստն իր ազդեցությամբ որպես արժեք հասարակության մեջ դիտարկելը մեր հասարակության տարբեր շերտերի համար պետք է դառնա նրա արժեհամակարգի անկյունաքարերից մեկը, քանզի դրա մեջ է և երազայինը և՛ իրականը և՛ իդեալականը, այս արժեքը նույնպես մարդուն ուղեկցում է մանկապարտեզից մինչև խորը ծերություն, իմաստավորում նրա կյանքը:

Պատկերացնենք այսպիսի մի տեսարան. Հայաստանի գեղատեսիլ անկյուններից մեկում երեխաները նստած քարերի վրա կամ հենված ծառերին, կլանված վայելում են «Էսոր ուրբաթ է » ,«Հորովել», «Մեր դռանը խնկի ծառ» երգերը, ոմանք վրձինը ձեռքին բնության գեղեցիկ պատկերներն են որսում և թղթին հանձնում, մի հոգի առանձնացել է ծառերի ետևում բառեր է մտմտում բանաստեղծություն ամբողջացնելու համար, մեկ ուրիշը՝ իր սիրած շվիով կոմիտասյան մեղեդիներ է զլում, մի պատանի էլ որակյալ կավ է հայտնաբերել մոտակա ձորակում և այն հավաքում է տոպրակի մեջ, տալու իր փոքրիկ արվեստանոցը՝ դրանք քանդակի համար որպես ելանյութ օգտագործելու նպատակով: Սովորողների մի մեծ խումբ էլ որ ընդգծված տաղանդ չունի որևէ արվեստի բնագավառում առանձնացած՝ իրենց սիրած հեղինակի են ընթերցում, ընկնում երազների գիրկը:

6.Գեղեցիկի ընկալումն ու նրանով ապրելը, որպես արժեք

Մարդկային իմաստն ու խորհուրդը հենց գեղեցիկ ապրելու, զգալ կարողանալու, դրանով կյանքը իմաստավորելու մեջ է:

Քաղաքակրթության ողջ պատմությունը մեզ հուշում է, որ սրանով է պայմանավորված կյանքի բազում դժվարություններ հաղթահարելու կարողությունը:

Դառը, տքնաջան, չարքաշ աշխատանքի մեջ են ծնվել «Հորովելն» ու բազում աշխատանքային այլ երգեր: Անկարելի կլիներ մարդու համար կյանքի հարուցած բազում

տանջանքներն հաղթահարելը, մաքառելն ու տոկալը: Հանրակրթական դպրոցի սովորողներն իրենց՝ պատկերասրահներ այցելությունների ընթացքում պետք է առնչվեն մեծ գեղանկարիչների, քանդակագործների ստեղծած արվեստի կոթողների հետ, ապրեն և թևածեն գեղեցիկի աշխարհում:

Եթե սովորողը զգում է Այվագոլսկու «9-րդ ալիքի» իմաստն ու գեղեցկությունը, նրա մեջ անշուշտ խլրտում է տարերային մի ահռելի ուժ՝ զգում և գիտակցում է այդ ուժի և՛ գեղեցկությունը և՛ շարժումը իր մեջ: Իսկ եթե այս ապրումը զուգակցենք Նաև Բեթհովենի 8-րդ սիմֆոնիայի հնչյունների հետ, ապա վեհացման պահը կատարյալ կլինի:

Հանրակրթական դպրոցի սովորողների մոտ պետք է ձևավորել և զարգացնել երաժշտական գոհարների հնչյունների ներքո կատարել իրենց և՛ մտավոր և՛ ֆիզիկական աշխատանքը:

Սովորողների մոտ գեղեցիկի զգացողությունը կարելի է արմատավորել և զարգացնել Նաև գրականության միջոցով: Երեխան պետք է զգա և ապրի բանաստեղծության կախարդական ու առիթնող հմայքով:

Մարդկային գործունեության բոլոր ոլորտներն ընդգրկող և արտացոլող գեղագիտական դաստիարակությունը նպաստում է անձի բնավորության և աշխարհայեցողության ձևավորմանը, նրա կենսագործունեության ձևավորմանը, նրա կենսագործունեության այնպիսի կողմերի զարգացմանը, առանց որոնց աներևակայելի են մարդու հոգևոր հարստությունը, գործունեության ստեղծագործական սկիզբը, հասարակական կյանքի բոլոր, այդ թվում՝ սոցիալ-քաղաքական, տնտեսական, տեխնիկական, գիտական, մանկավարժական բնագավառներում:

Գեղագիտական կրթությունը և դաստիարակությունը՝ որպես անձի գեղագիտական զարգացման կարևոր գործոն, օգնում են անհատին՝ ոչ միայն տեսնելու, ճանաչելու, զգալու իրականությունն ըստ գեղեցիկի օրենքների, այլև ապրելու և գործելու ըստ այդ օրենքների, լավագույնս դրսևորելու իր ստեղծագործական ներուժը, հոգևոր հարստությունը՝ ազատ անկաշկանդ և ստեղծագործաբար:

Հենց այդպիսի ստեղծագործական, համակողմանի և ներդաշնակ զարգացած անձի ձևավորմանն է ուղղված ժամանակակից հումանիստական դաստիարակությունը, որի հիմքում ընկած են ազգային և համամարդկային սրբագործված արժեքները:

Ահա թե ինչու հասարակության բոլոր անդամների, ազգի բոլոր քաղաքացիների և առանձնապես հասունացող սերնդի գեղագիտական դաստիարակության հիմնահարցը ձեռք է բերում առաջնային նշանակություն և հնչեղություն:

7. Ազգային պահպանումը գլոբալիզացիայի պայմաններում

Մեծ է և կարևոր այս խնդրի լուսաբանման կարևորությունը հանրակրթական դպրոցի սովորողների համար:

Ժամանակակից աշխարհում շատ ու շատ հարաբերություններ՝ գիտություն, տեխնիկա փոփոխվում, զարգանում է մեծ, անսպասելի արագությամբ, որին նպաստում են օրեցօր զարգացող հաղորդակցման միջոցները:

Ժողովուրդների սոցիալ-տնտեսական, գիտամշակութային զարգացման գործը ընթանում է մեծ արագությամբ: Երևույթը, որը աշխարհի ժողովուրդներին տալիս է հնարավորություն փորձի փոխանակման, մարդկային շփումների միջոցով հասնել բարձունքների, որոնք ոչ վաղ անցյալում երազանք էին թվում: Բայց այս հույժ կարևոր, ժամանակակից գործընթացն իր հետ բերում է նաև վտանգ, որն սպառնում է մեզ կորցնել մեր ազգային դիմագիծը, մոռանալ շատ ու շատ արժեքներ, որոնցով մենք դարերի մղձավանջային բավիղները հաղթահարելով, մնացել ենք մեր ազգային նկարագրին հարազատ:

Հանրակրթական դպրոցի սովորողների մոտ պետք է ամրապնդել այն գիտակցումը, որ մեր ազգային դիմագիծը անխաթար պահելու ամենառաջին զենքը մեր ինքնատիպության մեջ գեղեցիկ և հզոր լեզվի պահպանումն է, որը մեզ հնարավորություն է տալիս ինչ պայմաններում էլ ապրենք և ստեղծագործենք, բազում դժվարություններ հաղթահարելու համար մեզ համար անմար փարոս դարձնենք մեր նախնիների անկոտրում ոգին ու ազատասիրությունը, մարդասիրությունն ու խաղաղասիրությունը:

Հայ ժողովրդի գոյատևման կախարդական բանալին, նրա՝ դարերի ընթացքում մշակած ու սրբագործած արժեքների պահպանումը ժամանակակից աշխարհում, երբ համահարթեցվում, ուժացվում են շատ ժողովուրդների հոգևոր- մշակութային դիմագծեր, հայ ժողովուրդն իր համամարդկայնորեն բարձր ու վեհ արժեքները, իր ազգային ինքնությունը կարող է պահպանել միայն իր լեզվի և մշակույթի անխաթար պահպանմամբ, որով մենք գոյատևել ենք հազարամյակներ որպես ազգ:

Եզրահանգում

Կիրառելով վերոհիշյալ մեթոդները վերոնշյալ արժեքները հանրակրթական դպրոցի սովորողների մտապատկերում և առօրյա կյանքում մեր նպատակն է՝

1. Նպաստել սովորողների միջանձնական հարաբերություններում բարձր մշակույթ ձևավորելուն, որը խորապես կնպաստի ուսման որակի բարձրացմանը:
2. Արմատավորել նրանց գիտակցության մեջ հայրենասիրության արժեքը, որի հիմքերի վրա միայն կարող են ամրապնդվել մնացած բոլոր արժեքները, ձևավորել այն դրույթը, որ կայուն և խոր գիտելիքներ ստանալու ձգտումն արդեն իսկ հայրենասիրությունն է, քանզի հայրենիքին անհրաժեշտ են խոր գիտելիքներով զինված քաղաքացիներ, ովքեր հարկ եղած դեպքում կյանքն անգամ չեն խնայում հայրենիքի ազատության համար:
3. Սովորողների գիտակցության մեջ ամրապնդել այն միտքը, որ հայ ընտանիքը հայ ժողովրդի հայելին է, նրա ակունքն ու սնուցող երակը, և հետևապես միշտ վառ պահել ընտանիքի արժեքը:
4. Միշտ պայծառ պահել հայ ժողովրդի բարոյական նկարագրի մի ցայտուն գիծը՝ մարդասիրությունը, նաև որով մեզ ճանաչում են ու գնահատում:
5. Գլոբալիզացիայի մեր բարդ ժամանակներում միշտ վառ պահել այս արժեքները, որպեսզի զերծ մնանք ժողովուրդների համահարթեցման, ազգային դիմագիծը կորցնելու՝ ասել է հայրենիք կորցնելու վտանգից:

Առաջարկություններ

1. Հնարավորություն տալ սովորողներին մասնակցելու համայնքային հիմնախնդիրների աշխատանքներին, հետազոտման և նախագծային աշխատանքների միջոցով:
2. Նպաստել ճիշտ զարգացնելու մեդիա կրթությունը, գրագիտությունը լրատվության բնագավառում:
3. Ապահովել ճիշտ տեղեկատվության կարևորություն, իրադարձությունների լուսաբանումը:
4. Նպաստել բազմակողմանի և ներդաշնակ ազատ խոսքի տարածմանը:

Ծանոթություն

Սույն աշխատանքը շարադրելու ընթացքում չեմ օգտագործել որևէ մեկի աշխատություն կամ հոդված՝ հենվելով մեր կենսափորձի և գիտելիքների վրա:

Հետգրություն

Ճապոնիայի վարչապետին մի առիթով հարցրին՝ «Ո՞րն է Ձեր երկրի աննախադեպ հաջողության գաղտնիքը»:

Նա ասաց. «Մենք տվել ենք դպրոցական ուսուցչին Նախարարի չափ աշխատավարձ, պատգամավորի չափ՝ կարգավիճակ, և կայսեր չափ պաշտամունք»: